Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2023-2024 ուստարի)

11-րդ դասարան (տևողությունը՝ 150 րոպե)

ա) Հայոց պատմություն (15 միավոր)

1. Ե՞րբ է Կ.Պոլիս հասել Հակոբ Ջուղայեցու գլխավորած պատվիրակությունը Եվրոպա մեկնելու նպատակով.
   ա/ 1677 թ. բ/ 1678 թ. գ/ 1679 թ. դ/ 1680 թ. 0,5 մ.
2. Ո՞վ էր գլխավորում թուրք զավթիչների դեմ ազատագրական պայքարն Արցախում 1729-1731 թթ. 0,5 մ.
   ա/ Աբրահամ սպարապետ բ/ Ավան գ/ Եսայի Հասան-Ջալալյան դ/ Թարխան
3. Որտե՞ղ է ռուսերենով լույս տեսել «Նոր տետռրակ, որ կոչի յորդորակ» գիրքը. 0,5 մ.
   ա/ Մոսկվա բ/ Աստրախան գ/ Ս. Պետերբուրգ դ/ Լվով
4. Նադիր շահի օրոք ո՞վ է նշանակվել Արարատյան երկրի քալանթար. 0,5 մ.
   ա/ Մելիք Հակոբջան բ/ Մելիք Եգան գ/ Մելիք Եսայի դ/ Մելիքջան Մելիք-Շահնազարյանց
5. Ո՞ր թվականին է Արևելյան Վրաստանը հայտնվել Ռուսական կայսրության կազմում. 0,5 մ.
   ա/ 1783 թ. բ/ 1800 թ. գ/ 1801 թ. դ/ 1804 թ.
6. Որքա՞ն էր 1830 թ. Արևելյան Հայաստան վերաբնակեցված արևմտահայերի մոտավոր թվաքանակը.
   ա/ 45 հազար բ/ 55 հազար գ/ 65 հազար դ/ 75 հազար 0,5 մ.
7. Ըստ Մովսես Խորենացու՝ որտե՞ղ է գտնվել մեհենական պատմագրության արխիվը. 0,5 մ.
   ա/ Աշտիշատ բ/ Արտաշատ գ/ Անի ամրոց դ/ Բագարան
8. Որտե՞ղ է ստեղծվել «Զինակիր» գաղտնի կազմակերպությունը. 0,5 մ.
   ա/ Ալեքսանդրապոլ բ/ Երևան գ/ Կարին դ/ Վան
9. Ե՞րբ է ստեղծվել Հնչակյան կուսակցությունը. 0,5 մ.
   ա/ 1895 թ. բ/ 1887 թ. գ/ 1896 թ. դ/ 1898 թ.
10. Ե՞րբ է ստեղծվել Հայկական մարզը (նշե՛ք տարեթիվը, ամիսը, ամսաթիվը): 0,5 մ.
11. Ռուսական կայսրության ո՞ր նահանգի մեջ են մտցվել Արցախը և Սյունիքի զգալի մասը (Զանգեզուրը) 1860-ական թթ. վարչական փոփոխությամբ: 0,5 մ.
12. Ո՞վ էր Կովկասյան կորպուսի Երևանյան ջոկատի հրամանատարը 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա/ Բուխարեստի հաշտության պայմանագրի կնքումը
    բ/ Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի կնքումը
    գ/ Գյուլիստանի հաշտության պայմանագրի կնքումը
    դ/ Հայկական մարզի լուծարումը
    ե/ Կովկասի փոխարքայության հիմնումը
    զ/ XIX դարի ռուս-թուրքական առաջին պատերազմի սկիզբը
    է/ Արևմտահայերի ազգային սահմանադրության վավերացումը օսմանյան սուլթանի կողմից
    ը/ Բեռլինի վեհաժողովի ավարտը
    թ/ Կիպրոս կղզին Մեծ Բրիտանիային փոխանցելու՝ անգլո-թուրքական գաղտնի համաձայնագրի կնքումը

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)
    1. Ստեփանոս Տարոնեցի 2. Մխիթար Հերացի 3. Սմբատ Գունդստաբլ
    4. Ներսես Շնորհալի 5. Գրիգոր Տաթևացի 6. Մովսես Կաղանկատվացի
    ա. «Ջերմանց մխիթարություն» բ. «Թուղթ ընդհանրական» գ. «Դատաստանագիրք»
    դ. «Տիեզերական պատմություն» ե. «Պատմություն Աղվանից աշխարհի» զ. «Գիրք հարցմանց»

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
    ա/ Իսրայել Օրին Գերմանիայից վերադառնում է Հայաստան՝ հայ-վրացական զինական համագործակցությունն ապահովելու համար:
    բ/ 1770-1780-ական թթ. ռուսահայ կենտրոններն ակտիվացել են Հայաստանի ազատագրման հարցում, որովհետև հարավ տարածվելու՝ Ռուսաստանի ձգտումը և հայ ազատագրական ծրագրերը համահունչ էին:

գ/ Հովսեփ Էմինի՝ Արցախից հեռանալու պատճառը նրան ձերբակալելու՝ Իբրահիմ խանի ցանկությունն էր:
դ/ Սիմեոն Երևանցի կաթողիկոսը խոչընդոտում էր Մադրասի խմբակի գործունեությանը, որովհետև զգուշանում էր հայ երիտասարդների անժամանակ ապստամբելու վտանգից:
ե/ 1828 թ. պարսկահպատակ հայերի վերաբնակեցումից հետո մի խումբ հայ մտավորականներ Հայաստանի ազատագրության նախագիծ են մշակել և ներկայացրել ռուսական արքունիքին:
զ/ Ռուսական իշխանությունների կողմից Հայոց Եկեղեցու 1836 թ. կանոնադրության ընդունման նպատակը նրա նվիրապետական նոր կառույցի հաստատումն էր:
է/ Որպես հեռավոր նպատակ՝ հնչակյանները սահմանել էին մարդու կողմից մարդու շահագործման վերացումը և սոցիալիզմի կառուցումը, իսկ մոտակա խնդիր՝ Արևմտյան Հայաստանի ազատագրումը թուրքական բռնապետությունից:
ը/ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին մեծ թվով հայերի մասնակցության պատճառներից էր գրավված տարածքներում հայկական ինքնավարություն ստեղծելու՝ Ալեքսանդր II կայսեր խոստումը:
թ/ 1896 թ. Ժնևի համագումարում Հնչակյանները պառակտվել են սոցիալիստական և ազգային թևերի:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)
ա/ 1722 թ. Սյունիքի Շինուհայր ավանում հաստատված հայ զինվորականներն իրենց շուրջը համախմբել են տեղի հայկական զինված ուժերը, և Դավիթ բեկի ղեկավարությամբ ստեղծվել է ռազմական խորհուրդ:
բ/ «Զելլոներ» էին կոչվում Արևմտյան Հայաստանի ժողովրդական վրիժառուների խմբերը:
գ/ «Որոգայթ փառաց» գիրքը նախատեսում էր ապագա Հայաստանի կառավարության ստեղծման կարգը, համաձայն որի՝ փոխանորդներից պետք է ընտրվեին 13 հոգի, որոնցից մեկը վիճակահանությամբ դառնալու էր վարչապետ, իսկ մյուսները՝ խորհրդակիցներ:
դ/ Օսմանյան կայսրությունում հայերի համար մեծ չարիք են եղել Կովկասից և Բալկաններից հայկական հողերում վերաբնակվող մահմեդականները՝ չերքեզները և մոջահեդները:
ե/ Օսմանյան կայսրությունում 19-րդ դարում պահպանվում էին միջնադարից եկող հողատիրության ձևերը՝ պետական, մասնատիրական և հոգևոր հաստատություններին պատկանող (մարաբա):
զ/ 1863 թ. Ազգային սահմանադրության համաձայն՝ ստեղծվում էին արևմտահայության կյանքը կազմակերպող մարմիններ՝ Ազգային ժողով (Երեսփոխանական ժողով), Ազգային կենտրոնական վարչություն, ազգային կյանքի տարբեր բնագավառներ սպասարկող խորհուրդներ:
է/ 19-րդ դարի կեսերին Զեյթունի հայկական ինքնավարությունը ղեկավարում էին չորս թաղապետերը:
ը/ 1881 թ. Կարինում ստեղծված «Պաշտպան հայրենյաց» ազատագրական կազմակերպությունն իր նպատակները թաքցնելու համար պաշտոնապես հանդես էր գալիս «Բարեգործական ընկերություն» անունով:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա/ 1590 թ. շահ Աբաս I-ը հաշտություն է կնքել Օսմանյան կայսրության հետ՝ նրան զիջելով գրաված բոլոր տարածքները, այդ թվում՝ Այսրկովկասն ու Ատրպատականը:
բ/ Շահ Աբասը առևտրական ու դիվանագիտական հարաբերություններ է հաստատել Ռուսաստանի և արևմտաեվրոպական երկրների հետ, ֆրանսիական վարպետների օգնությամբ վերազինել բանակը:
գ/ 1736 թ. Էրզրումում Պարսկաստանի և Թուրքիայի միջև կնքվել է պայմանագիր, որով Թուրքիան կրկին ճանաչում էր Պարսկաստանի տիրապետությունը Արևելյան Հայաստանում և Արևելյան Վրաստանում:
դ/ 1769 թ. Աստրախանի մեծահարուստ Մովսես Սարաֆյանը Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային է ներկայացրել Հայաստանի ազատագրության՝ իր կազմած ծրագիրը:
ե/ Մովսես Սարաֆյանի ծրագրի համաձայն՝ Ռուսաստանում բնակվող հայերից ու վրացիներից պետք է կազմվեին կամավորական ջոկատներ և ռուսական զորքերի հետ ուղարկվեին Վրաստան:
զ/ 1780-ական թթ. Հովսեփ Արղությանը և Հովհաննես Լազարյանը կազմում են Հայաստանի ազատագրության և հայ-ռուսական դաշնագրի՝ 18 հոդվածից բաղկացած մի նախագիծ:
է/ Հ. Արղությանի և Հ. Լազարյանի կազմած նախագծում առաջարկվում էր Հայաստանի մայրաքաղաք դարձնել Վաղարշապատը կամ Երևանը:
ը/ 1828 թ. ստեղծված Հայկական մարզն ուներ իր դրոշն ու զինանշանը. նման քայլով ռուսական արքունիքը փորձում էր հայկական ինքնավարության պատրանք ստեղծել:
թ/ Հայկական մարզի կառավարչի պաշտոնում 1830 թ. վրացի գեներալ Ճավճավաձեին փոխարինել է հայազգի գեներալ Վալերիան Մադաթովը:

1	2	3

18. Գտե՛ք, նշե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)

1860 թ. մայիսին Կ.Պոլսի Ազգային ընդհանուր ժողովը հաստատել է Ազգային կանոնադրությունը, որը Ն. Պալյանի առաջարկությամբ կոչում են «Ազգային սահմանադրություն»:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

«Այնուհետև զորացե՛ք և քա՛ջ եղեք՝ որպես քաջարի զավակներ, և ոչ ոքից մի՛ երկնչեք, որովհետև ահա հասել է քրիստոնյաների փրկության ժամանակը»:

ա. Ո՞ւմ խոսքերն են մեջբերված:

բ. Ո՞ր հեղինակի գործից է կատարված մեջբերումը:

գ. Որտե՞ղ են ասվել այդ խոսքերը:

բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)

1. Ո՞ր փարավորի օրոք է Եգիպտոսի և Խեթական պետության միջև պայմանագիր կնքվել. 0,5 մ.
   ա/ Ամենհոտեպ IV բ/ Թութմոս III գ/ Ռամզես II դ/ Յահմոս I
2. Պարսից ո՞ր արքայի օրոք է կառուցվել «Արքայական ճանապարհը». 0,5 մ.
   ա/ Դարեհ I բ/ Կյուրոս II գ/ Քսերքսես I դ/ Արտաքսերքսես III
3. Ե՞րբ է Հունաստանում ապստամբություն սկսվել օսմանյան տիրապետության դեմ. 0,5 մ.
   ա/ 1815 թ. բ/ 1818 թ. գ/ 1821 թ. դ/ 1825 թ.
4. Ֆրանսիայի ո՞ր արքան է առաջինը հրավիրել Գլխավոր շտատներ. 0,5 մ.
   ա/ Ֆիլիպ II Օգոստոս բ/ Ֆիլիպ III Քաջ գ/ Լյուդովիկոս IX Սուրբ դ/ Ֆիլիպ IV Գեղեցիկ
5. Ի՞նչ անվանումով է հայտնի Սրբազան հռոմեական (Գերմանական) կայսրության և պապականության միջև՝ բարձրաստիճան հոգևորականներին պաշտոնի նշանակելու իրավունքի համար պայքարը: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)
   1. Նապոլեոն Բոնապարտի կողմից պետական հեղաշրջումը Ֆրանսիայում
   2. Գերմանական կայսրության սահմանադրության ընդունումը Ռայխստագի կողմից
   3. Ճապոնիայի հռչակվելը սահմանադրական միապետություն
   4. Միջազգային օլիմպիական կոմիտեի ստեղծումը

1	2	3	4

   ա. 1889 թ. բ. 1894 թ. գ. 1799 թ. դ. 1871 թ.
7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

   ա/ Օ. Կրոմվելը միապետականների դեմ պայքարելու և բարեփոխումները պաշտպանելու համար ստեղծել է կառավարման հատուկ թև՝ դիրեկտորիա:

   բ/ 1653 թ. Օ. Կրոմվելը մի խումբ սպաների հետ կազմել է սահմանադրություն, որը Եվրոպայի պատմության մեջ առաջին անգամ օրենսդրորեն ձևակերպել է իշխանության տարանջատման սկզբունքը:

   գ/ 1871 թ. հունվարի 18-ին Փարիզի մոտ գտնվող Վերսալում հռչակվել է Գերմանական կայսրությունը:

   դ/ 1787 թ. ուժի մեջ են մտել ԱՄՆ-ի սահմանադրության առաջին 10 փոփոխությունները:

   ե/ Սուն Յաթսենի հիմնած «Չինաստանի վերածննդի միությունը» խնդիր է դրել իրագործելու երեք նպատակ՝ ազգայնականություն, ժողովրդապետություն և ժողովրդական բարեկեցություն:

   զ/ 1912 թ. հոկտեմբերին Բալկանյան միությունը, որի մեջ մտնում էին Բուլղարիան, Սերբիան, Մակեդոնիան և Չեռնոգորիան, պատերազմ է սկսել Օսմանյան կայսրության դեմ:

   է/ Օ. Բիսմարկը 1879-1882 թթ. ստեղծել է ռազմաքաղաքական դաշինք՝ Պրուսիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի մասնակցությամբ:

   ը/ 1904 թ. ստեղծված «Սրտագին համաձայնությանը» (Անտանտ) 1907 թ. միացել է նաև Ֆրանսիան, որով համաձայնությունը դարձել է եռակողմ:

1	2	3

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

05.02.2024 թ.